# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԵԴԱՐԻ, ՆՈՐԱՔԱՐԻ ԵՒ ՊՂՆՁԻ ԴԱՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

---

Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի բոլոր շրջանների համակողմանի ուսումնասիրութեան համար՝ հսկայական քանակութեամբ նիւթ է տալիս ժամանակաշրջանների յուշարձանների հնագիտական ուսումնասիրութիւնը։ Երեւանի համալսարանի պատմութեան ամպիոնի հնագիտութեան դասախօս, պատմական գիտութիւնների թեկնածու, Ս. Սարգսեանը՝ արդիւնաւէտ հետախուզական աշխատանքներ է կատարել հին եւ նոր քարեդարի, պղնձաքարի յուշարձանների յայտնաբերման եւ ուսումնասիրման ուղղութեամբ։ Հետախուզական աշխատանքներին զուգընթաց, 1966 թուականին, Սարգսեանը շարունակել է Գ. հազարամեակի պղնձաքարի բազմաշերտ, նշանաւոր բնակատեղի Շենգաւիթի արդիւնաւէտ պեղումները։ Շենգաւիթի պեղումներով բացուել են պարիսպը, պարսպին կից կլոր կացարանները, քառանկիւնի շէնքեր, վաղնջական ժամանակների այլ հետաքրքիր կառոյցներ։ Կացարաններում յայտնաբերուել են մեծ եւ փոքր կաւէ օջախներ։ Հնավայրի առաջին տարիների պեղումներով երեւան էր եկել կացնի կաղապար։ Վերջին տարիների պեղումներով յայտնաբերուել են մեծ թուով խեցանօթների, իրերի եւ առարկաների, զարդերի նմոյշներ, քարէ աշխատանքային եւ այլ գործիքներ, որսիզաքարէ ներդիրներ, թանկարժէք մետաղից զեղեցիկ զարդեր և այլ նիւթեր։ Վաղնջական ժամանակների երկրագործական մշակոյթի, կենդանական աշխարհի ուսումնասիրութեան համար կարեւոր են Շենգաւիթի քառանկիւնի շէնքում եւ այլուր յայտնաբերուած դարու եւ ցորենի, ինչպէս նաեւ կենդանիների ոսկորների մնացորդները։

Վերջին տարիներին Սեւանայ լիճը հարաւից եղերող Գեղամայ լեռներում եւ Սիւնիքում յայտնաբերուել են մինչ այդ միայն մի քանի նմոյշներով յայտնի ժայռապատկերներ, որոնցից միայն պատմաբան Պ. Սաֆարեանի եւ տղերքս զրոյի կողմից յայտնաբերածը՝ հասնում է շուրջ հազարի։ Սիսիանից երեսուն հազարամեայ հեռաւորութեան վրայ, Ուղտասար լերան հիւսիսային փէշերին 1966ի ամբանը մեզ յաջողուեց հազար քարերի վրայ յայտնաբերել և ուսումնասիրել, նախնադարեան ժամանակների արուեստի առաջին ստեղծագործութիւնները՝ ժայռապատկերները։ Հինգից – քառասուն նկար ունեցող «կտաւներ»ում ամենամեծ պատկերները բնօրինակի մօտաւորապէս մէկ քառորդի չափ են, ամենափոքրերը՝ լրականից 5–10 անգամ փոքր։ Կենդանի են վերարտադրուած գիշատիչների ու կենդանիների պատկերները։ Ուղտասարի ժայռապատկերները մեզ են հասել անխառն ու անաղարտ վիճակում, միայն մի քանի պատկերազարդ քարերի մակերեսները վնասուել են հողմնահարուելու պատճառով։ Մենապատկերով քարերի վրայ գերակշռում է լեռնաշխարհի երբեմնի կենդանական աշխարհի հիմնական ներկայացուցիչներից մէկը՝ բարձրեղջիւր քարայծը։ Քարայծերի հետ, բազդրեալ կտաւներում յաճախ են հանդիպում նաեւ օձ–վիշապները, առիւծի, ձիու, մարդկանց, ինչպէս եւ երկրաչափական, առեղծուածային այլ պատկերներ։ Նախնական ծանօթացումն ու ընթեռնումը մեզ բերում է այն համոզման, որ միաձեւ ու բազմաձեւ ժայռապատկերները գերազանցապէս նոյն ժամանակահատուածի, սակայն տարբեր շրջանների արդասիք են։ Նախքան կ՚անցնենք ժայռապատկերներից մի քանիսի յիշատակութեանը, ասենք, որ տոտեմների պաշտամունքի ժամանակաշրջանի այս յուշարձանները՝ նախնադարեան արուեստի առաջին ստեղծագործութիւնները մշակութային–պատմական երկու դարաշրջանների՝ նորաքարի եւ պղնձաքարի՝ 8–3րդ հազարամեակների գործ են, երբ նախնադարեան մարդու գոյութեան հիմնական միջոցի՝ որսի հետ, նուազ կարեւոր չէին նաեւ երկրագործութիւնն ու անասնապահութիւնը։ Ժայռապատկերներում չափազանց առատ են որսորդական տեսարանները։ Հեծեալ որսորդներ չկան, որսորդները միայն ոտաւոր են եւ զինուած երկու տեսակի՝ մեծ ու փոքր աղեղներով, յաճախ որսորդներին ուղեկցում են որսկան շներ։ Սակաւ են հանդիպում կենդանիների մորթիներով քօղարկուած ծպտեալ որսորդներ, որոնք, մասնաւորապէս պղնձէ գօտիների վրայ այնքան առատօրէն պատկերուած են Հայաստանում յայտնաբերուած հնագոյն ժամանակների նիւթական մշակոյթի յուշարձաններում։ Ուղտասարի ժայռապատկերներում որսորդները ներկայացուած են շուրջկալով՝ որսի տեսարաններում։ Շուրջկալով որսի հետաքրքրական տեսարան է՝ մեծաքար երկաթաքարի ողորկ մակերեսին զիպուկ նրբերանգներով վերարտադրուած բաղադրութիւնը։ Աւելի քան քսան նկարներով ուժական աշխատանք «կտաւի» կեդրոնում են եռանկիւնանք «կտաւի» կեդրոնում են եռանկիւնաձեւ դասաւորութեամբ երեք քարայծեր, որսական շներ, ապա սրանից աջ եւ ձախ վագք առած խուռնընթաց եղջերուներ, սրանցից ներքև աջից՝ աղեղներ պոկուած, երեք կոճղարոունցք նետաձիգներ, ձախից մէկ այլ ոտանաւոր նետաձիգ՝ լայնալիճ կամրջի նման ձգած աղեղով նետ է արձակում իր դիմաց կանգնած քարայծին եւ ապա վագքի մէջ որսական շուն։ Բաղադրութեան մէջ ակնբախ է ուժականութիւնը։ Ուղտասարի ժայռապատկերներում զգալի թիւ են կազմում պաշտամունքային արարողութիւններ, ծիսական պար, (արեւմուտք փռուող տարածութեան վրայ գտնուող մեծ քարի ողորկ մակերեսին) ուր վերին շարքում պատկերուած է թեւ թեւի տուած կոփածոյ մարմիններով այրերի լեռնաբեկորների նմանող շուրջպար։ պարողների ոտքերի տակ քարայծ, յովազ, կրկին քարայծ եւ այլ առեղծուածային պատկերներ։ Հազարաւոր տարիներ առաջ ստեղծուած զարմանալի ձեւերի մէջ կաղապարուած պատկերները, հինաւուրց արուեստի ոգորումների այս նորայայտ էջերը, կարեւոր աղբիւր են թափանցելու նախնադարեան մարդու գեղարուեստական աշխարհը։

Ժայռապատկերները մեծ նպաստ են բերում գիտութեան մէջ թերեւս անպատասխան մնացած նախնադարեան պաշտամունքի շատ հարցերի լուծմանը։ Շուրջ տասը հազար դարուն տեսած Ուղտասարի ժայռապատկերները՝ լիարժէք աղբիւր են հայկական բարձրաւանդակի նախնադարեան հասարակութեան պատմութեան, նրա մշակոյթի համակողմանի ուսումնասիրութեան համար։

Էջմիածին քաղաքից երեք հազարամեայ հարաւ, Թեղուտ կոչուող հանդամասում, 1964 թուականին, յայտնաբերուել էին վաղ երկրագործական մշակոյթը բնութագրող նիւթեր։ Երիտասարդ հնագէտ Ռափայէլ Թորոսեանի Թեղուտում ձեռնարկած պեղումներով՝ բացուել է շինարարական մի ամբողջ սարքաւորում, նիւթական մշակոյթի հարուստ մնացորդներ։ Բնակատեղիի կիսագետնափոր հիւղակներն ու օժանդակ կառոյցները՝ կլոր յատակագիծ ունեն 2,6 3,5 մեթր տրամագծով։ Բնակարանների պատերը բարձրացուել են հում աղիւսով, որոնց մէջ նշմարուում են ցեխի հետ խառնուած



© National Library of Armenia

յարդի մնացորդներ։ Պատերն ու յատակը ծեփուած են յարդախառն կաւածեփով, որի վրայ նկատելի են կարմիր ներկի հետքերը։ Բնակարաններից մի քանիսի համար իբրեւ պատ ծառայել է կաւածեփերով ամրացուած հողի կտրուածքը։ Բնակարանների ներսում, յատակին յայտնաբերուել են ինչպէս աշխատանքային գործիքներ, այնպէս էլ խեցեղէն առարկաների բազմաթիւ նմոյշներ։ Թեղուտի երկրագործների աշխատանքային գործիքները պատրաստուած են կայծքարից, որսիդիանից, երկաթաքարից, ոսկրից եւ պղնձից։ Յայտնաբերուել են հողի մշակման, բերքահաւաքի, հացահատիկի աղալու եւ մշակելու հետ կապուած պահանջաւոր դանակների ներդիրներ, քարէ եւ ոսկրէ բրիչներ, աղօրիքներ, սանդեր։ Յայտնաբերուել են կենցաղային, առանձին գործածութեան առարկաներ, հագուստի եւ խեցանօթների պատրաստման հետ առնչուող, ինչպէս նաեւ անձնական արդուզարդի առարկաներ՝ ասեղներ, շքասեղներ, շիւղեր, քերիչներ, ծակիչներ, կորիչներ եւ այլն։ Կլոր կացարաններում յայտնաբերուած հնագիտական նիւթերի մէջ ամենամեծաքանակը խեցեղէն իրերի եւ առարկաների բեկորներն են, որոնք պատրաստուած են ձեռքով՝ յարդ խառնած, աւազախառն եւ ուղղակի մաքուր կաւից. աւազով լցուած պարկի կամ հիւսուած ծղօտի հիմքի վրայ կաւը ծեփելու եղանակով։ Կաւամանները անհաւասար թրծելու հետեւանքով՝ դեղին, կարմիր երանգ են ստացել։ Ամաններն արտաքուստ երեսպատուած են, երբեմն կոկուած են քարէ կոկիչով կամ յարդուած թաց լաթով կամ խոտով. կաւամաններից մի քանիսը զունազարդուած են սեւ, կարմիր ներկով։ Թեղուտում յայտնաբերուած պղնձէ իրերը, ինչպէս պարզուած է տարրալուծական ուսումնասիրութեան տուեալներով՝ ունեն մկնդեղային խառնուրդ։ Վաղ երկրագործական մշակոյթի ուսումնասիրութեան համար Թեղուտի յուշարձանը մեծ նշանակութիւն ունեցող հնավայր է։ Թեղուտի բնակատեղին իր նիւթական մշակոյթի մնացորդների զուգահեռներ է գտնում հայկական լեռնաշխարհի, հիւսիսային Միջագետքի, արեւմտաասիական սարահարթի, նախքան մեր թուագրութեան 5–4րդ հազարամեակներով թուագրուող, այսպէս կոչուած հալաֆեան եւ օբեյդեան մշակութային ազդեցութիւն ունեցող յուշարձաններում։ Մշակութային մնացորդների, բնակարանաշինութեան աւանդութիւնների համեմատական ուսումնասիրութեան հիման վրայ՝ Թեղուտի բնակատեղին թուագրուում է նախքան մեր թուագրութեան 5րդ հազարամեակի եւ 4րդ հազարամեակի առաջին կէսով։ Բնակատեղիի բնակիչները վարել են նստակեաց կեանք, զբաղուել երկրագործութեամբ, անասնապահութեամբ եւ որսորդութեամբ։ Հնագէտ Ռափայէլ Թորոսեանը, Թեղուտի բնակատեղիի պեղումներին զուգընթաց, 1966 թուականի հետախուզական աշխատանքների միջոցին մ.թ.ա. 5–4րդ հազարամեակների վաղ երկրագործական բնակատեղեր է յայտնաբերել Էջմիածնին մերձակայ Ծաղկունք, Նորակերտ, Զուարթնոց եւ այլ գիւղերում։ Պեղել է միջին եւ ուշ պղնձէ դարեան մի քանի գամբարաններ։

Երեւանից Արտաշատ տանող խճուղու ձախ կողմում՝ Արտաշատի շրջանի Զրահովիտ գիւղի ճահիճներով շրջափակուած արհեստական բլուրում, երկրաջրաբաների կողմից հորատման աշխատանքների միջոցին՝ 1966 թուականի աշնանը, նշմարուել է ութ մեդրանոց մշակութային շերտ։ Հնագէտ Էմմա Խանզադեանն սկսել է երրորդ հազարամեակի այս բազմաշերտ բնակավայրի պեղման աշխատանքները։ Պեղուած է 3 մեդր խորութեամբ 100 քառակուսի մեդր տարածութիւն։ Միջնադարեան շերտի տակ յայտնաբերուել են երկրորդ եւ առաջին հազարամեակների նիւթեր։ Բլուրի հիւսիսային լանջին բացուել են հում աղիւսով պատրաստուած 5րդ հազարամեակի կլոր կացարաններ, որոնց կեդրոնում գտնուել են թրծած կաւից, կիսագնդաձեւ երկու բռնակներով թոնրատիպ օջախներ։ Ուշադրութեան արժանի են 3րդ հազարամեակի՝ կաւից պատրաստուած կանացի, եղան, շան չափազանց հետաքրքիր արձանիկները, գտնուել են եզ պատկերող օջախի յենակներ։ Յայտնաբերուել են կենդանակերպ զարդերով խեցանօթներ, մետաղական խարամ, քարից կացնի կաղապարի մաս, քարէ մուրճեր եւ սեպեր, որսիդաքարէ դանակներ, կայծքարերից մանդաղի ներդիրներ, շեղբեր եւ այլ իրեր ու առարկաներ։

Հայաստանի պղնձի դարի մշակոյթի ուսումնասիրութեան համար բացառիկ նշանակութիւն ունեն Սեւանայ լճի ցամաքած տարածութեան վրայ, Լճաշէն գիւղի մօտ, պատմական գիտութիւնների թեկնածու Յարութիւն Մնացականեանի թելադրութեամբ կատարուող պեղումները։ Ցամաքած տարածութեան վրայ արշաւախումբը պեղել է մեծ թուով գերեզմաններ, մեծ գերեզմանաբլուրներ (կուռքաններ)։ Պեղումներ են կատարուում Լճաշէնի կիկլոպեան ամրոցի բնաւում Լճաշէնի կիկլոպեան ամրոցի բնաւում։ Լճաշէնի ամրոցի կանգուն պատերի բարձրութիւնը տեղ–տեղ 7–6 մեդր է։ Հղօր պարսպով շուրջպարուած ամրոցն ունի մի քանի հարիւր կացարաններ։ Մեծ կացարաններից մի քանիսը կամարածածկ են, որոնցից մի քանիսը կամարածածկ են, 2–3 սեսը միջնորմներով բաժանուած են 2–3 նեակների։ Ամրոցում բացուած 3–8 4 մեդր չափերի քառանկիւնի սենեակներից մէկի յատակը ծածկուած է երկաթաքարէ սալերով։ Ամրոցի հարթ տարածութեան վրայ փռուած է հնագոյն դամբարանադաշտը. դարեր շարունակ ջրի տակ գտնուելով՝ գերեզմանները պահպանուել են անվթար եւ գիտական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում ոչ միայն իրենց կառուցուածքով, այլեւ պարունակած նիւթերով, թաղման առանձնայատկութիւններով։ Հնագոյն դամբարանները, որոնք 3րդ հազարամեակից Ա. հազարամեակի սկզբները բնորոշող նիւթեր են պարունակում, անմշակ քարով են շարուած։ Մ. թ. ա. 16–13րդ դդ. դամբարաններում՝ թաղումը կատարուել է հորոտոք ունեցող փայտէ պատգարակներում, թաղման մի ձեւ, որը Հայաստանի այլ հնավայրերում թերեւս յայտնի չէ։ Ստորգետնեայ, կամարածածկ կառուցուածքներ են Լճաշէնի գերեզմանաբլուրները (կուռքանները), որոնք ունեն 6,5 8,8 մեդր երկարութիւն, 2–3 մեդր խորութիւն եւ 3 մեդր լայնութիւն։ Գերեզմանաբլուրների (կուռքանների) պատերի եւ ծածկի համար օգտագործուել են 3–5 տակառաձեւ քաշ ունեցող վիթխարի ժայռաբեկորներ։ Լճաշէնի գերեզմաններից եւ գերեզմանաբլուրներից՝ յայտնաբերուել են գիտական մեծ արժէք ունեցող բազմազան եւ մեծաքանակ նիւթեր։ Վաղընջական ժամանակների երկրագործական մշակոյթը բնութագրող նիւթերից՝ Լճաշէնում յայտնաբերուել են աղօրիքներ, սանդեր, մանդաղներ, մանդաղների կայծքարեր, ներդիրներ եւ այլն։ Լճաշէնի մ.թ.ա. 14–13րդ դարերի գամբարաններից յայտնաբերուել են կալսելու գործիքներ՝ երկաթաքար քարից, ինչպէս նաեւ փայտէ կամեր։ Քարէ կամերի մի ծայրը նեղ է, կամն ունի փորուած, խոր ակօսներով ցանցկէն մակերես։ Յայտնաբերուել են նշանակալից քանակութեամբ նիւթեր, որոնք հետաքրքրութիւն են ներկայացնում ժամանակի կենդանական աշխարհի, մասնաւորապէս անասնապահութեան պատմութեան համար։ Մինչեւ այժմ պեղուած 200 գամբարաններում յայտնաբերուել են մանր եւ խոշոր եղջերաւոր անասունների, ինչպէս նաեւ ձիու ոսկորներ։ Հետաքրքիր են առիւծի, այծեամի, եղան, կովի, ոչխարի, այծի կաւակերտ եւ պղնձէ սքանչելի արձանիկները. խեցանօթների եւ պղնձէ իրերի վրայ փորելու, ընդելուզելու եւ այլ եղանակներով արուած կենդանական զարդերը։ Լճաշէնում յայտնաբերուել են բազմաքանակ եւ բազմապիսի մետաղեայ իրեր, առարկաներ, որոնք հնարաւորութիւն են տալիս ուրուագծելու հինաւուրց մետաղամշակութեան պատկերը։ Լճաշէնում բացուել են մետաղահանքի հարուս-



© National Library of Armenia

տացման եւ մշակման մ·թ·ա· 13րդ դարի, իրար մօտ տեղադրուած հնոցներ, մետաղի խարամի մնացորդներ: 3րդ հազարամեակի կէսերի նիւթերի մէջ մետաղը խիստ սակաւ է· մ·թ·ա· 16րդ դարի նիւթերի մէջ հանդիպում են մետաղէ աշխատանքային գործիքներ, ճուլածոյ ծանրը սակրեր, նեղ, երկար շեղբով սրեր, պղնձէ պատեանների վրայ բարձրաքանդակ զարդանկարներ ունեցող լայնաշեղբ դաշիւններ, նիզակների ծայրապանակներ, աղեղների վեց տարատեսակներ, նետեր եւ նետասլաքներ, մետաղէ զարդեր՝ մեծ եւ փոքր ճարմանդներ, կոճակներ, շղթաներ, գընդաձեւ, տանձանման եւ տակառաձեւ բոժոժ–զանգակներ: Ցայտնաբերուած են նաեւ ոսկէ զարդեր: Լճաշէնում յայտնաբերուած մետաղէ զարդերի թագն է կազմում 14–15րդ դարերով թուագրուող պըղընձից, բաց երախով առիւծի գլուխը պատկերող կրծքազարդը, որը ծածկուած է ոսկու նուրբ թիթեղով: Պեղումներով յայտնաբերուած ոսկէ զարդերի զգալի մասը ընդելուզուած են երկնագոյն կանաչաւուն թանկարժէք քարերով: Պարզուած է, որ Լճաշէնի ոսկէ զարդերի հումքը Զողի ոսկեհանքերից է, որտեղ յայտնաբերուել են ոսկու հանքագործների մետաղէ գործիքներ: Հիացմունք են պատճառում նրբապարանոց, բազմեղջիւր եղջերուի պղնձէ արձանիկը, մկանուտ· արուեստի կատարեալ ստեղծագործութիւններ են կաղապարի մէջ ճուլուած թռչունների արձանիկները, որոնք վերարտադրուած են պատուանդանով: Դամբարաններից յայտնաբերուած նիւթերի մէջ չափազանց հետաքրքիր են հին արեւելքին շատ ընորոշ ճուլման եղանակով կերտած բարձրարուեստ պղնձէ մարտակառքերի մանրանկար տիպարներ: Մարտակառքերը եւ նրանց լծուած պատկերները առանձին ճուլելուց յետոյ են իրար զոդել: Ցայտնաբերուած երեք մարտակառքերից մէկի հարթակի վրայ վերարտադրած են կանգնած դիրքով երկու զինակից մարտիկներ եւ կառքը քաշող երկու նժոյգներ: Վաղնջական դարերի փայտամշակման բարձր մակարդակի ցայտուն վկայութիւններ են՝ դամբարաններում յայտնաբերուած քսան փայտէ սայլերը, նետերով լեցուն փայտէ կապարճը, փայտէ դգալներն ու իւրօրինակ շերեփները, տարբեր չափերի քրեղաններն ու ափսէները, կոնքերն ու սկուտեղները եւ այլ փայտէ իրերն ու առարկաները: Հիւսուածքագործ, երկրաչափական վարդեակների զարդերով, կենդանիների պատկերներով զարդարուած, սկաւառակաձեւ, փայտէ անիւներով սայլերը, Լճաշէնի դամբարաններում յայտնաբերուած, ծառայել են իբրև դիակառք, որոնց վրայ դրուել են թերեւս ցեղային առաջնորդների աճիւնները եւ վերջիններիս դոյգի հետ, սայլին լծուած եզների հետ միասին թաղել: Սայլ–դիակառքերի լծների մեծ մասը զարդարուած է ուռուցիկ գլխիկ ունեցող դամերով եւ պղնձէ ժապաւէններով: 2րդ հազարամեակի սկզբներին պատկանող սայլերը երկանիւ են, աւելի ուշ շրջանի նմոյշները քառանիւ են եւ յիշեցնում են Գետաշէնում Ե· Լալայեանի յայտնաբերած սքանչելի զարդաքանդակներով երկու լուծ եզներ լծուած քառանիւ սայլը: Հետաքրքրական են Լճաշէնի դամբարաններից գտնուած ջուլհակի գործիքների եւ ծաղկազարդ ու կենդանիների պատկերներով զարդարուած գործուածքի մնացորդները: Լճաշէնի հնագիտական նիւթի մէջ չափազանց շատ է առանձին կարիքների, զարդի եւ պաշտամունքային նպատակի ծառայող խեցեղէնը: Ուշադրաւ են սեւ խորքի վրայ կարմիր եւ սպիտակ նախազարդով՝ թերեւս ծիսական արարողութիւնների հետ աղերսուող խեցանօթները, այլազան թռչունների, այդ թուում կարապների կաւէ արձանիկները եւ այլն: Լճաշէնի մշակոյթի վերջին ժամանակահատուածի մ·թ·ա· 11–12րդ դարերի նիւթերի մէջ գերակշռում են երկաթէ գործիքները, իրերն ու առարկաները, նիւթեր, որոնք սերտ զուգահեռներ ունեն Արթիկի հնավայրի նիւթերի հետ: Առա-



ջիկայում Լճաշէնում շարունակուելիք պեղումները խոստանում են նոր, հետաքրքրական նիւթեր, որոնք նորանոր նիւթական փաստերով կը նպաստեն Սեւանի աւազանի բնիկ ցեղերի ստեղծած բարձր մշակոյթի համակողմանի ուսումնասիրութեան:

Տակաւին 1960 թուականին Հայաստանի պետական պատմական թանգարանի հնագիտական արշաւախումբը՝ պատմական գիտութիւնների թեկնածու Տելեմաք Խաչատրեանի ղեկավարութեամբ, պեղումներ սկսեց Արագած լերան հիւսիս արեւմտեան լանջերին, Արթիկ քաղաքից երկու հազարամեայ արեւմուտք տեղադրուած թիւ 15 քարահանքում, ուր բացուեցին ուշ պղնձէ դարաշրջանի մ·թ·ա· 13–7րդ դարերի հազուագիւտ կառուցուածքով չափազանց հարուստ քարափոր թաղումներ: Արթիկի հնավայրում յայտնաբերուած տուֆ քարի մէջ փորուած թաղման խցիկի տեսակն յայտնի է Հայաստանում: Հետաքրքրական է թաղումների պարունակութիւնը· պեղումների առաջին տարում քարի մէջ փորուած դամբարաններից մէկում յայտնաբերուել են վուշի գործուածքի մնացորդներ, որի վրայ պահպանուել են կարմիր, դեղին գոյները: Գործուածքն ունեցել է նկարներ· չափազանց հետաքրքիր են թռչունների եւ քարայծերի պղնձէ նկարները: Հոկայական քանակութեամբ սարքաւորումների մէջ մասնաւորապէս աչքի է ընկնում բազմաձեւ, հարուստ խեցեղէնը (կերամիկան), աշխատանքային գործիքները եւ զէնքերը: Մինչ այժմ պեղուած շուրջ վեց հարիւր դամբարան՝ մեծաքանակ եւ բազմատեսակ իրերով, որը մեծ չափով լրացնում է Արագածի լերան փէշերին հաստատուած բնիկների հնագոյն պատմութեան եւ նիւթական մշակոյթի մասին մեր ունեցած պատկերացումները: Նիւթական մշակոյթի զարգացման բարձր մակարդակը երեւան է գալիս՝ ոչ միայն վերը յիշատակուած դամբարանների պեղումներով յայտնի դարձած բարձրարուեստ իրերի եւ առարկաների առկայութեամբ, այլեւ առաջաւոր ասիական երկիրների հետ ունեցած կապերով: Պեղուել են հարիւր երեսուն թաղումներ եւ հետախուզական աշխատանքներ են կատարուել իր միջնադարեան ճարտարապետական հոյակերտ յուշարձաններով յայտնի Հառիճ գիւղի մօտ, Արթիկի մերձակայ դամբարանադաշտից ոչ հեռու բնակատեղում: Դամբարանային նիւթերի մէջ ուշադրաւ են դարբնոցի սարքաւորումը, Կարմիր բլուրի պեղումների միջոցին յայտնաբերուած ուրարտական նըմոյշներն յիշեցնող պղնձէ սրուակ, հիանալի պահպանուած պղնձէ նետասլաքները (ծայրապանակները), պղնձէ սրերը, որոնց շեղբերը զեղազարդուած են օձապատկերներով· պղնձի վրայ օձապատկեր զարդերի փորագրութիւնը պղնձից է, որը Հայաստանում երեւան է գալիս առաջին անգամ: Այդ շեղբերը զարդարուած են իրար միացուած լարերով: Զարդանք ունեցող իրերի եւ առարկաների խմբից հետաքրքիր են արծաթէ թիթեղներով ծածկուած պղնձէ կոճակները, ճարմանդները եւ այլն: Արթիկի հնագիտական գիտարշաւի աշխատանքներում՝ գիտական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում բնակատեղիի պեղումները: 1966ին հետախուզական աշխատանքների միջոցին բացուել են լաւ պահպանուած մի քանի բնակարաններ: Արթիկի բնակատեղիի բնակարանները ուղղանկիւն յատակագծային հորիզոնականք ունեն եւ 10–25 քառակուսի մետր չափերի են: Պեղուած տուֆ քարից շարուած բնակարաններում յայտնաբերուել են մեծ քանակութեամբ պղնձաքարի խեցեղէնի նմոյշներ, որի զուգահեռները գտնում ենք Շենգաւիթի բնակատեղում· յայտնաբերուած նիւթերում կան եզակի, մինչ այժմ անյայտ նըմոյշներ: Ուշադրութեան արժանի են մետաղէ առարկաները՝ պղնձէ քառանիստ բիզը եւ քորոցները: Քորոցներից մէկը զուգահեռներ ունի քուռ–արաքսեան պըղընձաքարի հնագիտական նիւթերում: Հետախուզական պեղումների միջոցին նոյն բնակատեղում բացուած բնակարա-



© National Library of Armenia

նում յայտնաբերուել են բացառիկ հետաքրքիր եղան, կովի, խոյի, ոչխարի եւ այլ կենդանիների շուրջ 50 նրբակերտ կաւէ սքանչելի արձանիկներ: Մի քանի արձանիկների վրայ պահպանուել են յղկման հետքերը, միւսները ներկուած են կարմիր գոյնի ներկով: Այս բացառիկ հետաքրքիր արձանիկների սենեակում յայտնաբերուել է հիանալի պահպանուած, չափազանց արժէքաւոր երկանիւ սայլի կաւէ օրինակը: Պէտք է ենթադրել, որ արձանիկների մեծ մասը ծիսական նշանակութիւն ունեն եւ կապուած են Հառիճի բազմաշերտ բնակատեղիի ընդհանրի կրօնական պատկերացումների հետ: Հառիճի՝ երրորդ հազարամեակի՝ պղնձաքարի շրջանի չափազանց հետաքրքիր յուշարձանի ուսումնասիրութիւնը լայն ծաւալով շարունակուելու է առաջիկայ տարիներին:

Վերջին տարիներս լայն ծաւալ է ստացել կիկլոպեան ամրոցների ուսումնասիրութիւնը: Արագածի հնագոյն ամրոց բնակատեղերին նուիրուած հետաքրքրական ուսումնասիրութիւն է պատրաստել արուեստի հաստատութեան աշխատակից ճարտարապետ Կորիւն Ղաֆադարեանը: Հնագիտութեան Հաստատութեան գիտաշխատակից Գ· Միքայէլեանը 1960 թուականից սկսած Սեւանի, Կամոյի, Մարտունու, Բասարդեչարի, Հրազդանի եւ Կոտայքի (Արովեանի) շրջաններում դաշտային աշխատանքների միջոցին ուսումնասիրել է շուրջ 90 կիկլոպեան ամրոցներ: Գ· Միքայէլեանի ուսումնասիրած կիկլոպեան յուշարձանների մեծ մասը արդէն չափազանց, հանութագրուած է: Ամրոցներից առաւել հետաքրքիր է մանաւորապէս Մարտունու շրջանում Զորագիւղից 2 հազարամեդր արեւմուտք գտնուող «Սանդար» անունով յայտնի կիկլոպեան հզօր ամրոցը· այն խոյանում է խոր կիրճի հիւսիսային սարահարթին վրայ: Ամրոցի պարսպին երկարութիւնը 225 մեդր է, պարսպի լայնութիւնը 5–7 մեդր, ամրոցի ընդհանուր մակերեսը 36·000 քառակուսի մեդր է: Ամրոցն ունի միջնապարիսպ: Միջնաբերդում եւ նրանից դուրս նշմարուում են բնակարանների մնացորդներ: Հիւսիսային մասում ունեցել է միաշար կրկնապարիսպ, որին յարում է բոլորաձեւ դամբարաններով զերեզմանադաշտը: Ամրոցն ունի 16 հզօր աշտարակներ, որոնք զետեղուած են ամրոցի խոցելի՝ արեւմտեան հատուածում: Պարիսպը շարուած է վիթխարի ժայռաբեկորներով, առանց շաղախի: Այն շարուած է երեք շարք խոշոր քարերից, շարքերի միջեւ ազատ տարածութիւնը լցուել է փոքր քարերով: Պարիսպը տեղտեղ պահպանուել է 5–8 մեդր բարձրութեամբ: Մուտքի լայնութիւնը 5 մեդր է: «Սանդար» կիկլոպեան ամրոցի հարաւային մասում, ուր դահավէժ խոր ձոր է, քարանձաւներում յայտնաբերուել են որսիդիանի բեկորներ եւ խեցանօթների մնացորդներ:

Երեւանից 36 հազարամեդր հեռաւորութեան վրայ Էջմիածնի շրջանում է գտնուում Մեծամօրը: Մեծամօրը չորրորդական շրջանի, հրաբխային բուրգ է· այն բարձրանում է Արարատեան դաշտում եւ իրենից ներկայացնում է երկու բլրաշարք: Մեծ բլուրը հնագոյն ժամանակներից միջնաբերդ է ունեցել, իսկ փոքրը հանդիսացել է պաշտամունքային արարողութիւնների կեդրոն: Մեծամօրը տակաւին 1913 թուականին իր վրայ է հրաւիրել Մեսրոպ Տէր–Մովսէսեանի ուշադրութիւնը: Յետագայում հնավայրում հետախուզական աշխատանքներ է կատարել հնագէտ Եւգենի Բայբուրդեանը եւ ապա՝ Հայաստանի ակադեմիայի հնագիտութեան հաստատութեան մի խումբ երիտասարդ գիտական աշխատողներ: 1964 թուականին Մեծամօրի հրաբխային բուրգի ծաղումը պարզելու նպատակով Երկրաբանութեան Հաստատութեան աշխատակից, երկրաբան Կորիւն Մկրտչեանը տեղում, իր կատարած ուսումնասիրութիւնների միջոցին բլրի մակերեսին նկատում է մետաղական խարամի մեծ կուտակումներ, հանքանիւթի հարստացման կերպի հետքեր: Հայկական ակադեմիան ուշադրութեան առնելով Մեծամօրի ուսումնասիրութեան կարեւորութիւնը՝ որոշում է, ընդունում, ստեղծել երկրաբանների եւ հնագէտների խմբական արշաւանք: 1965 թուականից սկսած գիտարշաւը (արշաւախմբի պետ Կորիւն Մկրտչեան, պետի օգնական, հնագէտ Էմմա Խանզադեան) պեղումներ է կատարում Հայաստանի հնագոյն լեռնա–մետաղագործական կարեւոր օջախ Մեծամօրում: Մեծամօր հնավայրը հիւսիս–արեւմտեան եւ հարաւ արեւմտեան կողմից շրջափակուում է Մեծամօրի (սև ջուր) ակունքներով, հիւսիս–արեւելեան մասում նշմարուում են արհեստական ջրանցքի եզրագծերը, որոնք գետի հետ միասին կազմում են բնական պատնէշ, որի ներսում ուրուագծում են երկաթաքարէ անտաշ մեծ քարերով կառուցուած պարսպի գծերը: Բլրի եւ պարսպի միջեւ տեղադրուած է բնակելի տների սարքաւորումը: Երեսուն հեկտար տարածութիւնն զբաղեցնող հնավայրի պարսպի երկու հատուածներում նկատելի են կիսաբոլոր աշտարակները: Մեծամօրի հնագոյն բնակատեղին տարածուում է ընդհուպ մերձակայ լճի ափերը· մ·թ·ա· 2–1 հազարամեակների դամբարանադաշտը զբաղեցնում է բլրից մէկ հազարամեդր հիւսիս–արեւելք ընկած տեղամասը: Բլրի հիւսիս–արեւելեան եւ արեւելեան լանջերին յայտնաբերուել են մանրած հանքաքարը հարստացնելու եւ հալելու համար սարքաւորում՝ թրծած կաւից պատրաստած փոքր, թոնրաձեւ ու քառանկիւնաձեւ աղիւսներով կառուցուած քանի մեծ հնոցներ, որոնք յատակից փոքր ինչ բարձր օդանցք ունեն: Թոնրատիպ ձուլարանների տրամագիծը 0,5 մ·–1 մ· է: 1965 թուականին բլրի արեւելեան լանջին պեղուել է 6 մեդր խորութեամբ 100 քառ· մ· մակերես: Պատմական գիտութիւնների թեկնածու, հնագէտ Էմմա Խանզադեանի ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Մեծամօրի բլուրը բնակեցուած է եղել 3րդ հազարամեակից ընդհուպ ուշ միջնադար: Բլրի հիւսիսային լանջին մետաղային հանքանիւթի հարստացման ձուլարանների առաջին շերտերում յայտնաբերուել են մետաղագործական արտադրութեան հետ կապուող քարից, հրակայուն աղիւսից, կացնի, այլ իրերի ու առարկաների ձուլման կաղապարներ, ձուլման հնոցների հետ առընչուող կաւէ խողովակներ, կաւէ սալեր, քարէ գործիքներ, հանքաքարի մշակման ծեծիչներ եւ այլ իրեր ու առարկաներ: Նոյն շերտում գտնուել են մ·թ·ա· 1ին հազարամեակի զարդարուն եւ անփայլ խեցեղէնի բազմապիսի, մեծ քանակ կազմող նմոյշներ: Մեծամօրում թերեւս պեղուել են 9 դամբարաններ, որոնք բոլորն էլ վերաբերում են մ·թ·ա· 1ին հազարամեակի սկզբներին: Դամբարանները երկաթաքար, տուֆ քարերով ծածկուած քառանկիւնաձեւ արկղներ են· հանդիպում են առանձին եւ խմբական թաղումներ: Իր պարունակած նիւթերով չափազանց հետաքրքիր է թիւ 4 դամբարանը· այստեղ յայտնաբերուել է պղնձէ զարդարուն գօտի, որի վրայ պատկերուած են հեծեալներ· սանձը ձեռքին, աղեղը պըրկած վիճակում հեծեալ, երկու նժոյգ լծուած մարտակառքեր, առիւծներ, ցուլեր, վարդեակներ եւ արմաւենու զարդամոթիւներ: Հետաքրքիր են արծաթէ վարսակալները՝ ալիքաձեւ, օձ յիշեցնող ոլորումներով, որոնք պղնձէ կիսալուսնեակներով ամրացուել են մազերին: Յայտնաբերուել են վերնազգեստին ամրացնելու պղնձէ քորոցներ, զարդարուն ճարմանդներ սեւ եւ կարմիր փայլով տեղական և ուրարտական խեցեղէն: Ուրարտական տեսակի կարմիր փայլով սքանչելի սկահակ, ագաթից, սերդոլիկից, ապակուց ուլունքներ: Մեծամօրի 1966 թուականի պեղումները նշանաւորուեցին մեծ գիւտով· բլրի հիւսիս–արեւմտեան լանջին յայտնաբերուել է առաջին հազարամեակի իր տեսակի մէջ Հայաստանում առաջին, նախաուրարտական աչքի ընկնող մի սրբատեղի՝ հեթանոսական մեհեան· 1966 թուականին պեղուած 50 քառ· մ· սենեակի կեդրոնում է տեղաւորուած կաւակերտ հեթանոսական մեհեան-



© National Library of Armenia

նը, որն ունի կիսաշրջան բեմ եւ ատրուշան։ Ատրուշանի դիմաց բարձրանում են եռաշար պաշտամունքային սիւներ կամ կուռքեր, որոնցից երկուսը պսակուած են երեքական սիւնանման բարձրութիւններով, սրանց առջեւ վեր է խոյանում մէկ սիւնաձեւ բարձրութիւն։ Այս սրբատեղին թերեւս կապուում է արեւի, լուսնի եւ աչքով տեսանելի հինգ մոլորակների պաշտամունքի հետ։ Իւրաքանչիւր սեան գագաթ եւ սիւներին միացնող հանդոյցները պսակուած են թասանման խորութիւններով։ 50 քառ· մ· զբաղեցնող (առայժմ այդքան տարածութիւն է պեղուած) սենեակի կեդրոնում տեղաւորուած մեհեանից աջ յայտնաբերուել է յար եւ նըման, թասաձեւ փոսերով վերջաւորուող քառանկիւնաձեւ աւազան։ Սրբատեղիի պեղումները չեն աւարտուած եւ կը շարունակուեն 1967 թուականին։ Մեհեանից ձախ գտնուել են պայտաձեւ կաւակերտ վառարանների շարքեր։ 1966 թուականին Մեծամօրի մեծ բլուրի հիւսիս-արեւելեան լանջին պեղումներով հնոցների առաջին շերտում յայտնաբերուած արհեստանոցում գտնուել են բազմաթիւ քարէ աշխատանքային գործիքներ, սակրաձեւ քարէ կացիններ, աղօրիք յիշեցնող տրորիչ քարեր, հասարակ եւ սեւ փայլով եռանկիւնաձեւ, բազմաչար ալիքաձեւ եւ այլ զարդերով խեցեղէն։ Կաւէ իրերից հետաքրքիր է եռանկիւնաձեւ առարկան, որի վերայ փորուած են գաղտնիմաց նշաններ։ Մեծամօրի պեղումներով յայտնաբերուել են երկգլխանի օձաքանդակ ունեցող սեւ փայլով կարասներ, զնդաձեւ իրանով, եօթ աշտարակներով կաւակերտ ջահ, խորաքանդակ եւ հասկաձեւ զարդերով անօթներ։ Փոքր բլուրում յայտնաբերուել են հարթակներ, դէպի դրանք տանող սանդուղքներ, աստղագիտական նշաններ։ Մասնագէտները գտնում են, որ այնտեղ հաւանաբար գործ են ունեցել երկնային լուսատուները զննելու, դուշակութիւնների եւ պաշտամունքի հետ։ Տարեց-տարի առատ եւ ուշագրաւ նիւթեր երեւան բերող Մեծամօրի պեղումներն աւելի մեծ ծաւալով շարունակուում են։

Հայկ· ակադեմիայի հնագիտութեան հատատութեան աշխատակից պատմական գիտութիւնների թեկնածու Ստեփան Եսայեանը, Շամշադինի շրջանի Ղրղի գիւղի շրջակայքում սփռուած դամբարանադաշտում պեղել է ուշ պղնձէ եւ վաղ երկաթէ դարաշրջանների մ·թ·ա· 11–9րդ դարերի յիսուն դամբարաններ։ Պեղուել են դերաղանցապէս քարարկղային, դետնափոր դամբարաններ եւ դերեզմանաբլուրներ (կուռքաններ)։ Մ·թ·ա· 16րդ դարի դետնափոր մի դամբարանում անօթների հետ յայտնաբերուել են դունագարդ մեծ սափորներ, որոնց կարմիր խորքի վրայ սեւ ներկով արուած են ալիքաձեւ նախշեր, եռանկիւններ, վերարտադրուած են ջրային թռչունների պատկերներ, արեւի խորհրդանիշեր։ Յայտնաբերուած է փոքր, տերեւաձեւ դաշոյն՝ կոթի (դաստակի) մէջ խրուող լեզուակով։ Հետաքրքրական է Ղրղի գիւղի մօտ պեղուած կուռքանը, որը դիակիզման խցիկ ունի։ Գերեզմանայ տրամագիծը 4 մեդր է· իրերը սփռուած են վերջինիս քարէ լիցքի վէմերի արանքում· այսպիսին Հայաստանում առաջին անգամ է յայտնաբերուում։ Յայտնաբերուած են 10–12 հմ· բարձրութիւն եւ 7–8 հմ· տրամագծով միագոյն սեւ խորք ունեցող հարիւրից աւելի սափորներ, որոնց վերաբերում են մ· թ· ա· 6–5րդ դարերին։ 1966 թուականին Ստեփան Եսայեանը պեղումներ է կատարել Հայաստանի Իջեւանի շրջանի Ենոքաւան գիւղի Աստղաբլուր հնավայրում· այստեղի կիկլոպեան ամրոցն զբաղեցնում է շուրջ երկու հեկտար տարածութիւն· դամբարանադաշտը կից է ամրոցին։

Պեղուած 25 դամբարանների նիւթերի հիմնական մասը վերաբերում է մ·թ·ա· առաջին հազարամեակի սկզբներին՝ 9–8րդ դարերին։ Հնավայրում սակաւ են 6–5րդ դարերի դամբարանները։ Ամրոցի բարձր կէտի վրայ յայտնաբերուել է շատ հետաքրքիր մեծ սրբատեղի։ Սրբատեղին 8–18 մեդր չափերի, կրաքարի անմշակ



քարով մի կառոյց է, որի 79 հմ· բարձրութեամբ հիմնապատերն են միայն պահպանուել։ Սրբատեղիում պեղումներով յայտնաբերուել են 3 հմ· տրամագծով, 5–10 հմ· բարձրութիւն ունեցող մի քանի հարիւր փոքր, երկկոնաձեւ առարկաներ, որոնք թերեւս պաշտամունքային արարողութիւնների համար հաւատացեալների կողմից դրուել են սրբատեղեւում՝ իբրեւ սրբին մատուցուող ընծայ։ Այսպիսիք նոյնպէս առաջին անգամ են յայտնի դառնում Հայաստանում։ Սրբատեղիում յայտնաբերուել են երկաթէ նիզակներ, կորաշեղբ դանակներ, նետասլաքներ, խոյագլուխ պղնձէ դեղեցիկ ապարանջաններ, մարդ պատկերող պղնձէ մանրանկար արձանիկներ։ Վիթխարի հետաքրքրութիւն է ներկայացնում հրակայուն, դեղնակարմիր կաւից 12 հմ· բարձրութիւն եւ 6 հմ· լայնութիւն ունեցող երկյարկանի, երկթեք տանիքով չէնքի կաւէ սքանչելի տիպարը։ Հնավայրի ամրոցին կից դամբարանադաշտում յայտնաբերուել է մեծ քանակութեամբ դունագարդ խեցեղէն, որի մէջ առանձնանում է 9–8րդ դդ· մինչ այժմ անյայտ մի նը- մոյշ, որն ունի 30 հմ· տրամագիծ եւ աւելի քան 20 հմ· բարձրութիւն։ Անօթի դեղնաւուն խորքի վրայ շագանակագոյն ներկով արուած են ուղղահայեաց իջնող լայն գծեր։ Ուշագրաւ են կենդանիների՝ այծերի, խոյերի, ինչպէս նաեւ կենաց ծառի եւ այլ պաշտամունքային յատկանիշերով զարդարուած խեցանօթները։ Ենոքաւանի խեցեղէնը սերտ կապեր ունի Դիլիջանի, Կիրովականի մ·թ·ա· 9–8րդ դարերի վաղ երկաթի ժամանակաշրջանի, միւս կողմից հայկական բարձրաւանդակի արեւելեան մասի՝ Գետարակի եւ Արծախի հնավայրերի խեցեղէնի հետ։ Ենոքաւանի նիւթերի մէջ աչքի է ընկնում քարարկղային դամբարաններից մէկում յայտնաբերուած բարձրարուեստ հազուագիւտ պղնձէ զօտին։ Շուրջ 1 մ· երկարութիւն և 16 հմ· լայնութիւն ունեցող պղնձէ թիթեղի վրայ վերարտադրուած են հմայութեան (մագիկ) պաշտամունքի հետ կապուած որսի տեսարաններ, պատկերուած են մարտակառքեր, հեծեալներ, հետիոտն աղեղնաւորներ, որոնք պրկած լայնալիճ աղեղով նետ են արձակում եղջերուի մարմնին։ Մի կողմում աստուածուհին ձեռքին պահած թռչունով՝ արդելում է նետաձիգին նետ արձակելու ճակին սնող եղջերուին։ Պղնձէ զարդարուն զօտու միւս հատուածում վերարտադրուած է աստուածուհին, որը խրախուսում, յաջողութիւն է մաղթում որսորդին, հետիոտն որսորդ նետաձիգների արձակած նետերը խրուած են արու եղջերուի մարմնի մէջ։ Զօտու վրայ պատկերուած որսորդները վերարտադրուած են ծպտեալ՝ առիւծի եւ այլ կենդանիների դիմակներով, որը վաղնջական՝ հնաքարի ժամանակներից եկող, երկար ժամանակ յարատեւած աւանդութիւն է։ Իրերով ու առարկաներով այնքան հարուստ այս դամբարանում յայտնաբերուել են նաեւ մ·թ·ա· 9–8րդ դարերի երկաթէ դաշոյն, որի դաստակը վերջաւորուում է զանգակաձեւ զարդով։ Ենոքաւանի դամբարանադաշտի այլ թաղումներում յայտնաբերուել են նաեւ կոբաշեղբ դանակներ, ինչպէս նաեւ աւելի քան 10 հմ· երկարութիւն ունեցող բացառիկ հետաքրքիր մ·թ·ա· 9–8րդ դդ· պղնձէ շքասեղ։ Շքասեղի գլուխը երկճիւղ է· ճիւղերի ծայրերը վերջաւորուում են երեքական եղջերուների գլխիկներով։

Գ· ԿԱՐԱԽԱՆԵԱՆ

(Պատմական գիտութիւնների թեկնածու)

© National Library of Armenia